

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1. Անունը ազգանունը, զբացեցրած պաշտոնը՝** Վահե Գրիգորյան, ՀՀ Միջուկային Անվտանգության Կարգավորման Կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի տեղակալ:
- 2. Գործուղման վայրը/ ժամկետը՝** Վիեննա, Ավստրիա, 2023թ. դեկտեմբերի 11-15:
- 3. Հրավիրող կողմը՝** Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալություն (այսուհետ՝ ԱԷՄԳ):
- 4. Գործուղման նպատակը՝** Մասնակցություն Փոքր Մոդուլային Ռեակտորների (ՓՄՌ) կարգավորող մարմինների ֆորումի կառավարիչների հանդիպմանը և Միջուկային հարմոնիզացիայի և ստանդարտացման նախաձեռնության կարգավորող մարմինների 3-րդ աշխատանքային խմբի աշխատանքային հանդիպմանը, (Nuclear Harmonization and Standardization Initiative):
- 5. Քննարկված թեմաները՝** Հանդիպման ընթացքում դիտարկվել և քննարկվել է Միջուկային հարմոնիզացիայի և ստանդարտացման նախաձեռնության կարգավորող մարմինների 3-րդ աշխատանքային խմբի կողմից մշակվող փաստաթղթի նախագիծը:
- 6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր՝** հանդիպման ընթացքում ներկայացվեց Փոքր Մոդուլային Ռեակտորների (ՓՄՌ) կարգավորող մարմինների ֆորումի կառավարիչների և Միջուկային հարմոնիզացիայի և ստանդարտացման նախաձեռնության մեջ ընդգրկված կարգավորող մարմինների աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքների ընթացքը :
Ներկայացվեց Փոքր Մոդուլային Ռեակտորների նախագծի համատեղ դիտարկման և լիցենզավորման օրինակները և տարբեր երկրների համագործակցության մեխանիզմները: Մասնավորապես ԱՄՆ և Կանադան համատեղ իրականացնում են BWRX-300 ՓՄՌ լիցենզավորում: Լեհաստանը համագործակցության պայմանավորվածություններ ունի Կանադայի, ԱՄՆ և Ֆրանսիայի հետ, նրանց հետ համատեղ դիտարկելու համապատասխանաբար BWRX-300, NuScale, և NUWARD նախագծերը: Ֆրանսիան, Ֆինլանդիան և Չեխիան ավարտել են NUWARD նախագծի համատեղ դիտարկման առաջին փուլը: BWRX-300, NuScale, AP-300 ՓՄՌ նախագծերը ներառված են ՀՀ համար իրականացվող նախնական տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ:
Բարձր գնահատվեց և կարևորվեց Փոքր Մոդուլային Ռեակտորների (ՓՄՌ) կարգավորող մարմինների ֆորումի կողմից իրականացված աշխատանքները, ինչպես նաև ԱԷՄԳ կողմից պատրաստակամությունը նախաձեռնության շարունակության վերաբերյալ: :
- 7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հանդիպման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:
Որոշվեց հաջորդ փուլի աշխատանքների ծավալների որոշման համար մինչ 2024թ. մարտ ամիսը հավաքագրել շահագրգիռ երկրների առաջարկությունները

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կողմից շարունակել հետևել Փոքր Մոդուլային Ռեակտորների կարգավորող մարմինների ֆորումի աշխատանքներին, հնարավորություն դեպքում ներգրավվել որպես դիտորդ (լրիվ անդամակցության արժեքը կազմում է 3000 Եվրո/տարի): Հնարավորության դեպքում մասնակցել աշխատանքային խմբերի հանդիպումներին:

Շարունակել ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությունը Միջուկային հարմոնիզացիայի և ստանդարտացման նախաձեռնության կարգավորող մարմինների բոլոր երեք աշխատանքային խմբերի աշխատանքներին, ինչը հնարավորություն է տալիս մասնակցել փոքր մոդուլային ռեակտորների միջուկային անվտանգությանը, ապահովությանը և երաշխիքներին վերաբերող նորմերի և ստանդարտների համեմատական վերլուծության, լավագույն փորձի ուսումնասիրության և հարմոնիզացման աշխատանքներին և վաղ փուլից ներգրավվել տվյալ տեխնոլոգիաների վերաբերյալ համապարփակ քննարկումներին:

ՀՀ կառուցվող հնարավոր/հավանական ռեակտորային տեխնոլոգիայի ընտրությունից հետո միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն կհամագործակցի համապատասխան նախագծերով հետաքրքրված երկրների կարգավորող մարմնների հետ և կներգրավվի ռեակտորի նախագծի համատեղ դիտարկման խմբերում:

Վահե Գրիգորյան